Օրինակ նամակի պաշտօն Երկրորդ Տանուտէրութեան։

ԳԼՈՒԽ ԽԱ.

Տեսանելով մեր ընդունելութիւնն ժողովրդեան յաշխարհէն Աղվանից և թուղթ փոխանորդութեան իւրեանց ընդ ձեզ վրթանէսիդ 'ի գեօղջէն կաղնու և արիստակէսիդ 'ի գեօղջէն արզընկանայ, ըստ Օրինաց կարգադրութեան հայոց 'ի միջէ ձերմէ մեք ընկալաք վրթանէսդ կաղնոյ եղբայրակից մեր հաւատարիմ տանն հայոց և 'ի վերայ երդման և արժանաւորութեան քոյ, տուաք քեզ նամակ Շնորհաց և պաշտօն 'ի տանուտէրութեան ժամանակաւ երիս ամաւ 'ի մէջ տանն հայոց, զի դու Տեառն վրթանէսդ կաղնու նըստցիս 'ի երրորդ աթոռ տանուտէրութեան 'ի բարձրագահ և բարեվարք տանն հայոց, և ունիս իշխանութիւն զի տանուտէրամբ հանդերձ տացես իշխանութիւն ամենայն պաշտօնի նամակօք ամենայն պաշտօնատարաց, զի ելանեն իւրաքանչիւր գործ, և ունիս իշխանութիւն ըստ տանուտէրամբ հանդերձ ըստ Օրինօք հայաստանեաց հրամայել 'ի վերայ ամենայն բնութեան մարդոյ 'ի յերեսս երկրին հայաստանեաց, գրուեցաւ 'ի դրունս բարձրագահ և բարեվարք տանն հայոց յամսեանն դեկտեմբերի 20. յամի Տեառն փրկչին մերոյ Քրիստոսի 1773։